## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ն. Ի. Վավիլովի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ «Հայաստանի կենսաբանական հանդես»-ը վերահրատարակում է «Խորհրդային Հայաստան» թերթում 1934 թ. նոյեմբերի 26-ի համարում (№ 170) լույս տեսած հոդվածը. «Ակադեմիկոս Վավիլովը Հայաստանի վայրի ցորենների մասին», որի ֆոտոպատճենը բարեհաճորեն մեզ է տրամադրել պրոֆ. Պ. Ա. Գանդիլյանը։

## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՎԻԼՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՅՐԻ ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐԻ ՄԱՍԻՆ

*Երեկ ժամանած Լենինի անվան գյուղատնտեսական ակադեմիայի նախագահ՝ ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովը նոյեմբերի 24-ին Կուլտուրայի տան դահլիճում, ընդարձակ զրուցախոսություն կարդաց՝ «Երկրագործության և անասնապահության համաշխարհային կենտրոնները» նյութի շուրջը։ Հավաքված մասնագետ-բուսաբանների, պատմաբանների և գյուղատնտեսների կողմից ակադեմիկոս Վավիլովը ջերմ ընդունելության արժանացավ։ Երևանում եղած ժամանակամիջոցում նա ծանոթացավ գյուղատնտեսական գիտա-հետազոտական հիմնարկների, Գյուղատնտեսական ինստիտուտի մասնավոր երկրագործության ամբիոնի աշխատանքներին։*

*Երևանից մեկնելուց առաջ ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովը զրույց ունեցավ մեր թերթի աշխատակցի հետ, որի ընթացքում հայտնեց հետևյալը՝*

*— Մեր գործուղման հիմնական նպատակն էր ստուգել մի շարք գիտական հետազոտություններ՝ գյուղատնտեսական, ինչպես նաև կուլտուրական բույսերի ծագման հետ ծանոթանալու համար։*

*Սկսած Մոսկվայից մենք եկել ենք ավտոմեքենաներով և արդեն կտրել ենք մոտ 5000 կիլոմետր ճանապարհ, անցնելով Ադրբեջանական հանրապետությունը մինչև Մուղանի լեռնանցքը։*

*Ճամփորդության սկզբից Լենինգրադից մեզ ուղեկցում էին ամերիկյան գիտնականներ՝ պրոֆեսոր Միլլերը, դոկտոր Կոստոֆը և Աֆերմանը, որոնք մեզ հետ եկան մինչև Բաքու։*

*Ճամփորդելու ընթացքում մեր կողմից ամենից խոշոր ուշադրությունը դարձված է եղել Նախիջևանի հանրապետության, Ղարաբաղին և Հայաստանի հարավային շրջանին (Մեղրի)։*

*Պրոֆեսորներ Թումանյանի, Տրոֆիմովի և մի շարք այլ գիտական աշխատողների հետ մենք այցելեցինք Երևանին բավական մոտիկ գտնվող Շորբուլաղ կոչված վայրը։ Այստեղ մենք գտնեցինք խիտ աճած վայրի ցորենի ու տարեկանի տարածություններ։*

*Բոլորովին չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ այդ ոչ մեծ տարածությունը կառաջացնի համաշխարհային հետաքրքրություն։*

*Այստեղ կարելի է գտնել, ուսումնասիրել հացաբույսերի և ընդհանրապես երկրագնդի բուսականության պատմական զարգացումը։*

*Վայրի ցորենի տարածության հայտնաբերումով գիտական աշխարհը պարտական է միմիայն պրոֆեսոր Գ. Թումանյանի եռանդուն, մեծ աշխատանքին. ես համոզված եմ, որ երբ այդ վայրի մասին իմանա գիտական աշխարհը, ապա երկրագնդի զանազան մասերից անընդհատ գիտական էքսպեդիցիաներ են գալու դեպի Շորբուլաղ, այդ չափազանց հետաքրքիր վայրը ուսումնասիրելու համար։*

*Կասկածից վեր է, որ տեսակների բազմազանությամբ դա ամենից հետաքրքիր տեղն է ողջ աշխարհում։*

*Ինձ վիճակվել է ուսումնասիրել բազմաթիվ երկրներ, որոնք ընդունված է համարել հնագույն երկրագործական երկրներ, սակայն, կրկնում եմ, ավելի հարուստ, ավելի հետաքրքիր վայր, քան Շորբուլաղն է, դժվար է գտնել։*

Հայաստանի մասնագետները պետք է բախտավոր զգան իրենց, որ գտնվում են բուսականության այսպիսի հարուստ օջախի մոտ և չխնայեն իրենց ուժերը ավելի առաջ մղելու համար հետազոտական-ուսումնասիրական աշխատանքը։

Ես կառաջարկեի անպայման այդ հողամասից առանձնացնել 50—100 հեկտարի չափ, հատուկ խնամք տանել նրան, որպեսզի պահպանվի բույսերի զարգացման համաշխարհային նշանակություն ունեցող դոկումենտը։

Դա այնքան էլ դժվար գործ չէ, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ավելորդ հողամասն այնքան էլ պիտանի չէ ցանքի համար իր քարքարոտության պատճառով։

Մոտիկ ժամանակներում գումարվող սելեկցիայի համաշխարհային կոնֆերանսում ես պատմելու եմ պրոֆ. Մ. Գ. Թումանյանի այդ հայտնագործության մասին և անպայման կառաջարկեմ կազմակերպել գիտական էքսկուրսիա դեպի Երևան՝ այդ հողամասն այցելելու, նրա վրա աճող բազմազան վայրի ցորենների տեսակներին ծանոթանալու համար։

Մեծ գոհունակություն պետք է հայտնել այն նվաճումների առթիվ, որ ձեռք են բերված Հայաստանում գյուղատնտեսության գիտա-հետազոտական աշխատանքների ուղղությամբ։

Ես բախտ եմ ունեցել երկրորդ անգամ այցելել ձեզ. Դժվար է ճանաչել Հայաստանը, հատկապես նրա մայրաքաղաք Երևանը։ Մարդ ուղղակի զարմում է՝ տեսնելով Երևանի արագ կերպարանափոխությունը. Եվ որքան լավ է ու դուրեկան տեսնել, թեկուզ ձեր երկրի, քաղաքի օրինակով, թե ինչպես արագորեն փոխվում է ողջ խորհրդային երկրի տեսքը։

Ահա թե ինչու, ես կամենում եմ Գիտությունների ակադեմիայի, Գյուղատնտեսական ակադեմիայի և անձնապես իմ անունից ողջույն հայտնել նրա մասնագետներին ցանկանալով նրանց մեծ չափի հաջող հետագա պայքարի համար։

Գյուղատնտեսական ինստիտուտում չափազանց խոշոր, չափազանց արժեքավոր գործեր են կատարված մասնավոր հողագործության բնագավառում (պրոֆեսոր Թումանյանի ղեկավարությամբ)։ Միութենական նշանակություն ունեցող փորձեր են կատարված ագրո-հողագործության բնագավառում. պրոֆ. Քալանթարյանի ղեկավարությամբ։ Կերաբույսերի հայթայթման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել պրոֆեսոր Տրոիցկին։

Անել, մեծ հաստատություն է դարձել պտղաբանա-բուսաբուծական կայանը, որը շոշափելի գործ է կատարել տեսակների ուսումնասիրության, ագրոտեխնիկայի և սելեկցիայի ուղղությամբ։ Իմ միակ ցանկությունն այն է, որ ավելի մեծ ուշադրություն դարձվի գյուղատնտեսական ինստիտուտին, նրա կահավորմանը, շինարարական աշխատանքներին։ Պետք է ասել, որ ինստիտուտի կառուցվածքներն ու կահավորումը չեն համապատասխանում ղեկավարվող կոլեկտիվի պահանջներին, նրա որակին։

Ներկայումս ողջ Միության մեջ խոշոր ուշադրություն է դարձվում ուժեղ գյուղատնտեսական ինստիտուտ ունենալու վրա, ինստիտուտ, որն ունենա իր կահավորումը, անհրաժեշտ հողային տարածությամբ՝ գիտական փորձերի, պրակտիկ աշխատանքների համար։

Ահա թե ինչու Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի ուժեղացումը ողջ հանրապետության առաջիկա խնդիրը պետք է լինի։

Բացի այդ, վատ չէր լինի ավելի շատ ուշադրություն դարձնել նաև Սևանում գտնվող բիոլոգիական կայանի վրա, որը խոշոր գործ է կատարում ձկների տեսակների ու ռեսուրսների ուսումնասիրման ուղղությամբ։

Զրույցի վերջում ակադեմիկոս Ն. Ի. Վավիլովը խնդրեց «Խ. Հ.»-ի աշխատակցին, թերթի միջոցով իր խորին շնորհակալությունը հայտնելու Հայաստանի կառավարությանը, կուսակցական կազմակերպություններին ու գիտական աշխատողներին՝ իրենց ցույց տրված ջերմ ու մտերմական ընդունելության համար։